Հավելված
ՀՀ կառավարության 2025 թվականի
դեկտեմբերի 4-ի N 1759 - Ն որոշման

«Հավելված
ՀՀ կառավարության 2022 թվականի
սեպտեմբերի 29-ի N 1485-Ն որոշման

# ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՄԱՆԿԱՎԱՐ-ԺԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1. Սույն հավելվածով սահմանվում են՝

1) նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը.

2) պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ հաստատություն) վարչական (տնօրեն, մեթոդիստ՝ տնօրենի ուսումնական գծով տեղակալ, մասնաճյուղի ղեկավար, որոնք համարվում են նաև մանկավարժական աշխատողներ), մանկավարժական և ուսումնաօժանդակ կազմի վարձատրության խմբերի դասակարգման չափանիշները:

2. Վարձատրության խմբերը դասակարգվում են ըստ հետևյալ չափանիշների՝

1) վարչատնտեսական կազմի համար.

| NN ը/կ | | Հաստիքային միավորների քանակը՝ կախված խմբերի թվից | | | | | | | | | | | | Վարձա-տրության խումբը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Պաշտոնի անվանումը | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | |
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 5 |
| 2 | Մեթոդիստ՝ տնօրենի ուսումնական գծով տեղակալ | - | 0.5 | 0.75 | 0.75 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1.25 | 1.25 | 1.25 | 4 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | Մասնաճյուղի ղեկավար | 0.25 | 0.25 | 0.5 | 0.5 | 0.5 | 0.5 | 0.5 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 4 |
| 4 | Գլխավոր հաշվապահ | 0.5 | 0.5 | 0.5 | 0.75 | 0.75 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 3 |
| 5 | Տնտեսվար | 0.25 | 0.5 | 0.5 | 0.75 | 0.75 | 0.75 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 2 |
| 6 | Գործավար | 0 | 0 | 0.5 | 0.5 | 0.75 | 0.75 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 7 | Շեֆ խոհարար | - | - | - | - | - | - | - | - | - | 1 | 1 | 1 | 3 |
| 8 | Խոհարար | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| 9 | Խոհարարի օգնական | 0.5 | 0.5 | 0.5 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 10 | Լվացարար | 0.25 | 0.5 | 0.5 | 0.5 | 0.5 | 0.5 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 11 | Հավաքարար | 0.5 | 0.5 | 0.5 | 0.5 | 0.5 | 0.5 | 1 | 1 | 1 | 1 | 1.5 | 1.5 | 1 |
| 12 | Օժանդակ բանվոր | 0.25 | 0.5 | 0.5 | 0.5 | 0.5 | 0.5 | 1 | 1 | 1 | 2 | 2 | 2 | 1 |
| 13 | Հնոցապան | ինքնուրույն կենտրոնական ջեռուցում (ջրի, գազի, գոլորշու) ունեցող մանկապարտեզներում ջեռուցման սեզոնում սահմանվում է հնոցապանի հաստիք՝ յուրաքանչյուր հերթափոխի համար մեկ դրույքի հաշվով | | | | | | | | | | | | 1 |
| 14 | Փականագործ-էլեկտրա-մոնտյոր | • կենտրոնացված ջերմամատակարարման (ՋԷԿ) դեպքում ջերմային կետ կամ էլևատոր ունեցող մանկապարտեզներում սահմանվում է փականագործ-էլեկտրամոնտյորի մեկ հաստիք, իսկ բոյլերի և պոմպի դեպքում, երբ պահանջվում է շուրջօրյա հերթապահություն, սահմանվում է փականագործ-էլեկտրամոնտյորի հաստիք, յուրաքանչյուր հերթափոխի համար մեկ միավորի հաշվով<br>• սառնարանային սարքավորում, էլեկտրասալիկ և այլ էլեկտրական ջեռուցման սարքավորումների առկայության դեպքում 4 և ավելի խումբ ունեցող մանկապարտեզներում (եթե հաստիքներում չի նախատեսված փականագործ-էլեկտրամոնտյորի հաստիք) սահմանվում է 0,5 միավոր փականագործ-էլեկտրամոնտյորի հաստիք | | | | | | | | | | | | 1 |
| 15 | Այգեպան | մրգի այգի կամ դեկորատիվ տնկիներ ունեցող 0,5 հա մակերեսից ոչ պակաս դեկորատիվ բուսականությամբ հողամաս ունեցող մանկապարտեզներում սահմանվում է այգեպանի հաստիք՝ 1 միավոր, ինչպես նաև 0,5 հա -ից ավելի յուրաքանչյուր հաջորդ 0,5 հա հողամասի համար՝ ևս 0,5 միավոր | | | | | | | | | | | | 1 |
| 16 | Պահակ | պահակի հաստիքը սահմանվում է օրենքով սահմանված կարգով | | | | | | | | | | | | 1 |
| 17 | Վարորդ | վարորդի հաստիքային 1 միավոր կարող է սահմանվել ավտոտրանսպորտի առկայության դեպքում | | | | | | | | | | | | 2 |

2) մանկավարժական կազմի համար.

| NN ը/կ | Պաշտոնի անվանումը | Հաստիքային միավորների քանակը՝ կախված խմբերի թվից | | | | | | | | | | | | Վարձա-տրության խումբը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | |
| 1 | Դաստիարակ | 1.17 | 2.34 | 3.51 | 4.68 | 5.85 | 7.02 | 8.19 | 9.36 | 10.53 | 11.70 | 12.87 | 14.04 | 4 |
| 2 | Դաստիարակ (մսուրային խմբեր (վաղ տարիքի առաջին, երկրորդ, կրտսեր տարիքի առաջին խմբեր) | 2.34 | 4.68 | 7.02 | 9.36 | 11.7 | 14.04 | 16.38 | 18.72 | 21.6 | 23.4 | 25.74 | 28.08 | 4 |
| 3 | Երաժշտության դաստիարակ (երաժշտական ղեկավար) | 0.25 | 0.5 | 0.75 | 1 | 1.25 | 1.5 | 1,75 | 2 | 2 | 2 | 2.5 | 2.5 | 4 |
| 4 | Ֆիզկուլտուրայի հրահանգիչ | 0.25 | 0.25 | 0.5 | 0.5 | 0.75 | 0.75 | 1 | 1 | 1.5 | 1.5 | 2 | 2 | 4 |
| 5 | Մանկավարժա-հոգեբանական ծառայություն մատուցող մասնագետ (հատուկ մանկավարժ, լոգոպեդ, սոցիալական մանկավարժ, հոգեբան ) | 1 հաստիքային միավոր, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 15 սանից ավելի յուրաքանչյուր 7 սանի համար՝ 0,5 միավոր | | | | | | | | | | | | 4 |
| 6 | Պարուսույց՝ պարի ղեկավար | միջին և ավագ տարիքային յուրաքանչյուր խմբին՝ 0,25 դրույք, սակայն ոչ ավելի, քան 2 դրույքը (հիմնադրի կողմից լրացուցիչ բյուջետային միջոցների կամ հաստատության արտաբյուջեի առկայության դեպքում) | | | | | | | | | | | | 4 |
| 7 | Լրացուցիչ կրթական ծառայություն-ների մանկավարժ | յուրաքանչյուր խմբին՝ 0,2 դրույք, սակայն ոչ ավելի, քան 2 դրույքը (հիմնադրի կողմից լրացուցիչ բյուջետային միջոցների կամ հաստատության արտաբյուջեի առկայության դեպքում) | | | | | | | | | | | | 4 |

| | | | |
|---|---|---|---|
| | (ուսուցիչ, խմբավար) | | |

3) ուսումնաօժանդակ կազմի համար.

| NN ը/կ | | Հաստիքային միավորների քանակը՝ կախված խմբերի թվից | | | | | | | | | | | | Վարձա-տրության խումբը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Պաշտոնի անվանումը | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | |
| 1 | Բուժքույր | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1.5 | 1.5 | 1.5 | 1.5 | 3 |
| 2 | Բուժքույր (մսուրային խմբեր (վաղ տարիքի առաջին, երկրորդ, կրտսեր տարիքի առաջին խմբեր | 0.5 | 0.5 | 1 | 1 | - | - | - | - | - | - | - | - | 3 |
| 3 | Դաստիարակի օգնական | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 2 |
| 4 | Դաստիարակի օգնական (մսուրային խմբեր (վաղ տարիքի առաջին, երկրորդ, կրտսեր տարիքի առաջին խմբեր) | 2 | 4 | 6 | 8 | 10 | 12 | 14 | 16 | 18 | 20 | 22 | 24 | 2 |

3. Նախադպրոցական ուսումնական հաստատությունների շուրջտարյա բնականոն աշխատանքի ապահովման նպատակով մինչև նախորդ տարվա դեկտեմբերի 15-ը սահմանվում և հաստատության տնօրենի կողմից հաստատվում է արձակուրդների տրամադրման ժամանակացույցը: Աշխատակիցներին ամենամյա արձակուրդը տրամադրվում է աշխատանքային տարվա ցանկացած ժամանակ՝ ամենամյա արձակուրդի տրամադրման ժամանակացույցին համապատասխան:

4. Սույն հավելվածով սահմանված հաստիքային միավորները պարտադիր նվազագույնն են: Հիմնադրի կողմից լրացուցիչ բյուջետային միջոցների կամ հաստատության արտաբյուջեի առկայության դեպքում կարող են տրամադրվել

լրացուցիչ հաստիքներ՝ Կրթության կառավարման պետական լիազորված մարմնի գրավոր համաձայնությամբ։»։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

08.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ